



ՄԱՆԿԱԿԱՐԺ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Վանաձորի և Արցախի պետական համալսարանների միջև



Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի գլխավորությամբ, մայիսի 30-ին Արցախի պետական համալսարանում էին՝ փոխգործակցության պայմանագիր ստորագրելու, երկու բուհերի միջև վաղեմի համագործակցությունը սերտացնելու և այդ ուղղությամբ նոր քայլեր նախանշելու համար:

Արցախի մայր բուհի ռեկտոր Մանուշ Մինասյանը ողջունեց հյուրերին՝ ԱրՊՀ ղեկավարության առաջարկն ընդունելու համար: Նրա հավաստմամբ՝ նման համագործակցությունը ոչ միայն բուհի առաջնահերթություններից է բխում, այն նաև սրտի թելադրանք է. 1988 թ. Վանաձորի՝ նախկին Կիրովականի մանկավարժական ինստիտուտը մոր նման իր գիրկն ընդունեց արցախցի ուսանողներին և դասախոսական կազմին: «Դրված էր մեր բուհի լինել-չլինելու հարցը, այդ վճռորոշ պահին Վանաձորում համաձայնեցին հյուրընկալել և իրենց կազմում ընդգրկել մեզ: Ավերիչ երկրաշարժի պատճառով այդ ժամանակահատվածը շատ կարճ տևեց, սակայն այդ 3 ամիս ուսումնառությունը մեր նախկին ուսանողների, դասախոսական կազմի հիշողության մեջ է: Հետևաբար, Վանաձորի պետական համալսարանի հետ այս համագործակցությունը բխում է նաև Արցախի համալսարանականների սրտից», – ասաց Մ. Մինասյանը:

Երկու բուհերի միջև նման համագործակցությունը կարևորեց նաև ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար

Արմեն Սարգսյանը: Նրա խոսքով՝ բուհական գործընթացում խիստ կարևոր է ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների ակադեմիական շարժունությունը:

ՎՊՀ խորհրդի նախագահ Հենրիկ Քոչինյանն այն կարծիքին է, որ պետք է հարստացնել համագործակցության ուղիները: Նա նշեց, որ պատրաստ են աջակցել, իրենց փոխգործակցությամբ նպաստել Արցախի մայր բուհի զարգացմանը:

ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը հույս հայտնեց, որ զալիք հանդիպումների ժամանակ արդեն առիթ կունենան խոսելու կատարված աշխատանքների մասին. «Այն մարտահրավերներն ու խնդիրները, որոնք այսօր ծառայած են բուհերի առջև, պետք է հաղթահարենք միասին: Գիտելիքակենտրոն և ուսանողակենտրոն համակարգին լծվելը շատ պատասխանատու գործ է, և ես համոզված եմ, որ մեր համագործակցությունը կտա իր դրական պտուղները»:

Երկու բուհերի ռեկտորները հուշանվերներ հանձնեցին միմյանց և ստորագրեցին փոխգործակցության պայմանագիր:

Հանդիպման վերջում ՎՊՀ ռեկտորը նշեց, որ այս տարի ևս Հաղթուրի շրջանի Տունի և Մարտունու շրջանի ճարտար համայնքների 15 աշակերտ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն ՎՊՀ-ի «Բազում» ուսումնամարզական հանգրվանի «Աստղիկ» ճամբարում:

Նարինե ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՎՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ԳՐՔԵՐՈՎ

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում մայր բուհի պատվիրակությունը մայիսի 16-ին այցելեց Վանաձորի պետական համալսարան և ջերմ ընդունելության արժանացավ բուհի գրադարանում:

Պատվիրակության կազմում էին ԵՊՀ պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը, ԵՊՀ հրատարակչության տնօրեն Կարեն Գրիգորյանը, հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան Արծրուն Ավագյանը, հայ գրականության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյանը, ուսանողության հետ տարվող աշխատանքների գծով բաժնի վարիչ Վահագն Վարազյանը, հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Պապին Մուրադյանը և ուսանողական խորհրդի նախագահ Ռաֆիկ Քարամյանը:

Կազմակերպվել էր ԵՊՀ հրատարակչության կողմից տպագրված մի շարք գրքերի նվիրատվություն 33 մարզային բուհերին և քաղաքային գրադարաններին: Նախաձեռնությունը նպատակ ունի մարզային բուհերի և այլ կրթական հաստատությունների սաների համար հասանելի դարձնել յուրաքանչյուր կրթօջախի, ինչպես նաև գրադարանների համար անփոխարինելի այս գրականությունը:

Երկու համալսարանների միջև համագործակցությունն անչափ կարևորեց և ներկաներին ողջունեց ՎՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Սուսաննա Թումանյանը: Նա խորհրդանշական համարեց այն զուգահեռությունը, որ համալսարան դառնալուց հետո բուհն առաջին անգամ իր հարկի տակ հյուրընկալում է հենց ԵՊՀ ներկայացուցիչներին. «Որքան էլ մենք կատարել ենք մեր հիմնական պարտքը՝ ազգի համար մանկավարժական կադրեր թողարկելու գործում, այսօր շատ ավելի



մեծ պատասխանատվությամբ պիտի լծվենք կրթության գործին՝ մեզ համար գեղեցիկ ու բարձր օրինակ ունենալով առաջին հերթին մայր բուհը»:

ԵՊՀ պրոռեկտոր Ռուբեն Մարկոսյանը շնորհավորեց ՎՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմին համալսարան դառնալու կապակցությամբ և մաղթեց նորանոր հաջողություններ. «Շնորհավորում ենք ձեզ համալսարան դառնալու կապակցությամբ և ակնկալում լայն համագործակցություն գիտական և ուսումնական գործընթացներում: Թող այս հոբելյանը նոր խթան դառնա, որ երկու համալսարանները ձեռք ձեռքի տված դիմագրավեն ժամանակի մարտահրավերները և կրթեն ու դաստիարակեն հայ ազգին արժանի զավակներ»:

ԵՊՀ գրադարանը ՎՊՀ գրադարանին նվիրաբերեց շուրջ 120 անուն՝ 212 կտոր բազմաբնույթ գրականություն, այդ թվում՝ մենագրություններ, բառարաններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ և դասագրքեր:

Վերջին տարիներին ԵՊՀ հրատարակչության ջանքերով և Գալուստ Գյուլպենկյան հիմնադրամի օժանդակությամբ լույս են տեսել հարյուրավոր գրքեր. դրանց շարքում են Նիկողայոս Աղոնցի, Հրաչյա Աճառյանի, Հակոբ Մամանդյանի, Մանուկ Աբեղյանի, Հրաչիկ Սիմոնյանի հատորակները, ինչպես նաև հայ գրականության մեծերի գործերը:

ՎՊՀ շնորհալի ուսանողները, ի նշան երախտիքի, հանդես եկան մշակութային գեղեցիկ կատարումներով և արժանացան բուռն ծափերի:




Մայիսի 14-ին ՎՊՀ գիտական կաբինետում բաց դաս էին անցկացնում «Իրավագիտություն» մասնագիտության 1-ին կուրսի «բ» խմբի ուսանողները: Թեման Վ. Տերյանի

ԲԱՑ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ

պոեզիան էր: Գրականության ամբիոնի դասախոս Լիլիթ Անտոնյանի հանձնարարած գործնական դասը հուլ-ցերեկույթի վերածելը պատասխանատվության ու Տերյանի պոեզիայի նկատմամբ սիրո դրսևորում էր:

Դասն սկսվեց Տերյանի խոսքերով գրված «Իմ խաղաղ երեկոն է հիմա» երգով: Սիրանուշը ներկայացրեց Տերյանի անցած դժվարին ուղին, հնչեցին Չարենցի, Իսահակյանի, Թումանյանի, Բյուրևուզի խոսքերը բանաստեղծի մասին:





«ՄԻՐՈ ՀԱՆՃԱՐԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՇԻՆ

**Սերը գոյության հանճարն է միակ:
Սիրո հակառակն ամենևին էլ չսիրելը չէ:
Մահն է պարզապես:
Սիրահարները
Անմահությունն են վերանորոգում:**

Ալիսիա Կիրակոսյան

ՎՊՅ բանասիրական ֆակուլտետի գրականության ամբիոնը մայիսի 30-ին բուհի հարկի տակ հյուրընկալեց Երևանի գրողների միության նախագահ, գրականագետ Աբգար Ափինյանին:

Հանդիպման նպատակն էր հարգանքի տուրք մատուցել միջազգային համբավ ունեցող բանաստեղծուհի Ալիսա Կիրակոսյանի հիշատակին, ով օրերս է կնքել իր մահկանացուն: Միջոցառումը նաև նպատակ ուներ երիտասարդ սերնդին ճանաչելու առիթ տալ պոեզիայի այս դասականին:

Հանդիպմանը ներկա հյուրերին, ուսանողներին, դասախոսական կազմին ողջունեց գրականության ամբիոնի վարիչ Վալերի Փիլոյանը: Նրա հավաստմամբ՝ մարդու համար չափազանց կարևոր է ինքնության փնտրտուքը, ինչը օտարության մեջ հայտնված մարդու համար ավելի դժվար է: Ահա մնալ որոնումների մեջ էր և Ալիսիա Կիրակոսյանը. «Ստեղծագործելով իսպաներեն, անգլերեն, հայերեն՝ մեր հայրենակիցը հայտնի դարձավ աշխարհին և մի օր վերադարձավ հայրենիք: Այս արմատների փնտրտուքն է, որ ապահովեց նրա անմահության երաշխիքը»:

Աբգար Ափինյանը փոքրիկ անդրադարձ կատարեց բանաստեղծուհու կյանքին ու գործունեությանը. «Ալիսիա Կիրակոսյանը ԱՄՆ իսպանախոս գրողների միության պատվավոր նա-

խագահն էր, նրա մի քանի գրքեր նկարագրող է Պաբլո Պիկասոն: Ալիսիա Կիրակոսյանի պոեզիայի հիմքում ընկած է սերը, մայրությունը, հայրենիքը և փիլիսոփայական խոհը: Նա գերտարածական կոչվող բանաստեղծական շարժման հիմնադիրն է, նրա պոեզիան բնորոշվում է ներաշխարհի պատկերներով, արդիական լեզվամտածողությամբ և բանաստեղծական վերաիմաստավորումների ինքնատիպությամբ»:

Հայ ընթերցողը նրան ճանաչեց բանաստեղծ Վահագն Դավթյանի հրաշալի թարգմանությամբ «Արմատ և եություն» բանաստեղծությունների ժողովածուով:

Կանխավ զգալով մոտալուտ մահը՝ Ա. Կիրակոսյանը գրել է մի փոքրիկ կտակ, որը կարծես հրաժեշտի արարողություն լինի: Գրականագետ Ա. Ափինյանը բարձրաձայն հնչեցրեց այդ կտակը. «Ի՞նչ կարող եմ խորհուրդ տալ բոլոր նրանց, ովքեր արթնանում են ամեն առավոտ: Շնորհակալ լինել Աստծուն՝ կյանքը որպես նվեր ունենալու համար, զգալ իրենց գոյությունը, կյանքից վերցնել լավագույնը և փառաբանել այն, փոխել՝ ինչ կարող են, ժպտալ և ժպիտ բերել նրանց դեմքին, ում սիրում են: Վայելել կյանքը՝ իմաստավորելով ամեն րոպեն, յուրաքանչյուր փոքր հաջողությունը, յուրաքանչյուր դրական արդյունքը, ամեն մի սովորած դասը՝ լինի դա ուրախությամբ, թե ցավի միջոցով...»:

Իր կտակում Ալիսիա Կիրակոսյանը վստահեցնում է, որ ապրել է սիրով կախարդված. «Երբեմն ինձ թվում է, թե կյանքս ապրել եմ դատարկ «երեկներ» հավաքելով, բայց մարդիկ ինձ հիշեցնում են միշտ այն ժառանգության մասին, որը ցանցել եմ իմ անցած ճանապարհին. երազներս, բանաստեղծություններս, խոհերս, զգացումներս... Շատ սխալներ եմ թույլ տվել, ցավ եմ ապրել՝ անխուսափելի ճանապարհներից մեկը սովորելու և փորձ ձեռք բերելու: Բարի լուրն այն է, որ կհանդիպեմք նորից հավերժության ու անսահմանության եզերքում, քանզի հոգևոր թագավորությունում մնանը ձգում է նմանին»:

Հանդիպման վերջում Աբգար Ափինյանը ՎՊՅ գրադարանին և բոլոր ներկաներին նվիրեց Ա. Կիրակոսյանի «Ամբողջական երկերը», որը տպագրվել է Երևանի գրողների միության առաջարկությամբ և Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի հովանավորությամբ: Հատորն ամփոփում է երկար և բեղմնավոր գրական ճանապարհի անցած, երեք լեզուներով իսպաներեն, հայերեն, անգլերեն ստեղծագործած և համաշխարհային գրական ասպարեզում բարձր գնահատականի և մրցանակների արժանացած հայ բանաստեղծուհու հայերեն ստեղծագործությունները:

Ա. Ափինյանի առաջարկով ստեղծվեց նաև Ա. Կիրակոսյան գրական ակումբ, որին անդամագրվեցին ՎՊՅ գրականության ամբիոնի մի շարք դասախոսներ, ուսանողներ:

2 Իրենք՝ ուսանողուհիներ Սիմոնյան Մարիամը, Սաղունյան Հայկուշը, Պետրոսյան Սոֆյան, Մուրադյան Աննի, Գալստյան Մարիան, Շահվերդյան Սիրանուշը, Դանիելյան Գրետան, Ջանազյան Անուշը, Դանիելյան Սելանյան, ուսանողներ Անտոնյան Հովիկը, Չանգլյան Լևոնը, Ոսկանյան Աշոտն էին ընտրել իրենց հոգեհարազատ բանաստեղծությունները: Մեղեդային ու հոգեպարար չափածոն և ցուցադրված սլայդ-շոուն՝ «Վերջին ուղևորությունը» տեսաֆիլմով, դասախոսին հուզեցին: Դասի վերջում Լ. Անտոնյանն ասաց, որ ինքը բանասիրական ֆակուլտետին բնորոշ մակարդակ ու մոտե-

ցում տեսավ խմբի պատրաստած աշխատանքի մեջ, ինչը որպես ակնդիր և ունկնդիր կհավաստեն գիտական կարիների այցելուները:

Վերջում ուսանողները գիրք նվիրեցին իրենց դասախոսին և վիճակահանությամբ մեկական էլ՝ միմյանց, իրենց ցանկություններով ու հղումներով: Իսկ Լ. Անտոնյանին հանձնած շնորհակալագիրը անակնկալի բերեց նրան՝ այն համարելով իր աշխատանքի՝ մինչ օրս ստացած ամենալավ գնահատականը: Մնում է միայն ուրախանալ, որ այսպիսի ուսանողներ ունենք:

Կարինե ՂԱԶԱՐՅԱՆ
ՎՊՅ գիտական կաբինետի վարիչ



ԵՎՄ 100 ԿՏՈՐ ԳԻՐՔ ՎՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Մարդկության ստեղծած ամենամեծ արժեքներից մեկը գիրքն է, որի համար էլ այն բոլոր ժամանակներում համարվել է Լավագույնն Գիրքը:

Վանաձորի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի գրականության ամբիոնի դասախոս, ք. գ. թ., դոցենտ, Վանաձորի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Գայանե Հովհիսյանը հերթական անգամ գրքեր նվիրեց բուհի գրադարանին, հայոց լեզվի և գրականության կաթինետին:

Դասախոսի հավաստմամբ՝ գիրք նվիրելու գեղեցիկ ավանդույթ է ձևավորվել դպրոցում. ամեն տարի աշակերտները մեկական գիրք են նվիրում դպրոցին, իսկ դրանք գտնում են իրենց արժանի տերերին. «Դպրոցի կողմից բազմիցս իրականացվել են նմանատիպ նվիրատվություններ. մենք գեղարվեստական գրականություն, մասնագի-

տական գրքեր նվիրել ենք նաև Ղարաբաղի սահմանամերձ գյուղերի գրադարաններին: Նպատակը մեկն է՝ գրքերին երկրորդ կյանք պարգևել, շրջանառության մեջ դնել, դպրոցահասակների և ուսանողների մեջ արթնացնել սեր դեպի ընթերցանությունը»:

Բանասիրական ֆակուլտետի դեկան, ք. գ. թ., դոցենտ Ալբերտ Պողոսյանը ողջունեց նախաձեռնությունը. «Գ. Հովհիսյանի կողմից առաջին անգամ չէ, որ նվիրատվություն է կատարվում մեր գրադարանին, կաթինետներին: Շնորհակալություն, որ հարազատ բուհը չէք մոռանում: Հույս ունենք, որ այս քայլը վարակիչ կլինի»:

Այս անգամ բուհին նվիրաբերվեց 100 կտոր գիրք: Դրանք հիմնականում հունամիտար ուղղվածության են. կան ինչպես նեղ մասնագիտական, այնպես էլ հայ, ռուս և արտասահմանյան գրականության արժեքավոր նմուշներ:

Գ. Հովհիսյանի հավաստմամբ՝ այս անգամ կազմակերպել են առավել նպատակային գրքահավաք. բուհի համար ընտրվել են այն գրքերը, որոնք հանձնարարվում են ուսանողներին, քիչ են վերահրատարակվում, և դժվար է դրանք գտնել քաղաքային գրադարաններում:

Համարվելով մեր գրականությանը՝ ՎՊՀ գրադարանը ջանում է բավարարել ընթերցողների պահանջները: Արվում է ամեն ինչ, որ հարցված, սակայն ոչ առկա գրքեր բուհում չլինեն:

ՀԱՂԹԵՑ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» թիմը

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմաշխարհագրական ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողները խորհրդատու Մարիետա Անանյանի նախաձեռնությամբ կազմակերպել էին ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Մրցույթին մասնակցեցին 3 խմբեր՝ կազմված «Կառավարում», «Սոցիալական աշխատանք» և «Իրավագիտություն» մասնագիտությունների առաջին կուրսերի երեքական ուսանողներից:

Խաղի ընթացքում մասնակիցները փորձում էին հնարավորինս սեղմ ժամանակահատվածում արագ կողմնորոշվել և տալ խելամիտ պատասխաններ: Բազմակողմանի հարցերի շուրջ ծավալված թեժ պայքարում հաղթող ճա-

նաչվեց «Սոցիալական աշխատանք» մասնագիտության թիմը (Սվետլանա Նասիբյան, Արմինե Շախկյան, Նարե Ազիզադյան): Վերջնարդյունքում թիմը վաստակեց 720 միավոր («Կառավարում»՝ 340, «Իրավագիտություն»՝ 330): Հաղթող թիմին և մյուս մասնակիցներին պատվոգրերով և շոկոլադե մեդալներով պարգևատրեց տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ Նարինե Բարսեղյանը. «Սա մի յուրօրինակ միջոցառում է՝ ի մի բերելու այս մեկ տարվա ընթացքում բուհում կուտակած ձեր գիտելիքները, որոնք աստիճանաբար հարստանալու են: Շնորհակալություն գեղեցիկ նախաձեռնության և բովանդակալից խաղի համար»:

Հաղթող թիմին և բոլոր մասնակիցներին շնորհակալանքի խոսք ասաց նաև Մ. Անանյանը:



ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՍԵԹՈՂՆԵՐ

Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են դաս վարելու մեթոդները: Ավելին տեխնոլոգիաներն ուսանողներին և դասախոսներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի՝ նրանք պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանք պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:


Չգործարարներն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները:

Դասախոսների մեթոդական մակարդակի բարձրացման նպատակով Վանաձորի պետական համալսարանում հաճախ են կազմակերպվում մեթոդական սեմինարներ: Օրերս կայացավ հերթական սեմինարը:

«Երաժշտական մշակույթի դերը աշխարհայացքի ձևավորման գործում» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ մ. գ. թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը: Թեմայի ուսումնասիրման նպատակն է միջառարկայական կապերի միջոցով ընդլայնել ուսանողների աշխարհայացքը, բարձրացնել նրանց երաժշտական ճաշակը, նպաստել կայանալու որպես մասնագետ:

Ձեկուցումից հետո ծավալվեց բուռն քննարկում, որին ակտիվ մասնակցեցին մ. գ. թ., դոցենտ Ա. Սկրտչյանը, փ. գ. թ., դոցենտ Ա. Գրիգորյանը, մ. գ. թ., դոցենտ Ա. Հասարկյանը, բ. գ. թ. Պետրոսյանը, Ն. Սիրադեղյանը և այլք:

Սեմինարի ղեկավար, մանկավարժության ամբիոնի վարիչ Պ. Գևորգյանի հավաստմամբ՝ սեմինարները շարունակական են լինելու, քանի որ նպաստում են դասախոսների մեթոդական մակարդակի բարձրացմանը, նոր գիտելիքների ձեռքբերմանն ու փորձի փոխանակմանը: Նա հորդորեց բուհի դասախոսական անձնակազմին՝ գալիք ուսումնական տարում առավել ակտիվ լինել և մասնակցել կազմակերպվող սեմինարներին:



Այնուհետ Պ. Գևորգյանը ներկայացրեց Երևանում կայացած «Գնահատում» թեմայով սեմինարի բովանդակությունը, աշխատանքների արդյունքները, դասավանդման նոր մոտեցումները:

Ամփոփելով մեթոդական սեմինարի արդյունքները՝ Պ. Գևորգյանը ներկայներին ևս մեկ անգամ հիշեցրեց հոկտեմբերի 22-ին կայանալիք հերթական գիտաժողովի մասին և կոչ արեց հատկապես ուսուցման մեթոդիկա դասավանդողներին ցուցաբերել ակտիվ ներգրավվածություն:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ՝ ՆՎԻՐԱԾ ՀԱՅՐԵՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԻՆ



Վանաձորի պետական համալսարանի քոլեջի «Թարգմանություն և գործավարություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողները ինֆորմատիկայի դասախոս Հասմիկ Դերձյանի նախաձեռնությամբ կազմակերպել էին բաց դաս՝ նվիրված «Շնորհանդեսների ստեղծում և ցուցադրում» թեմային: Թվով 12 շնորհանդեսները կրում էին «Հայրենի աշխարհ» խորագիրը: Ուսանողներն իրենց անհատական ցուցադրություններով ներկայացրին հայկական բնաշխարհը, Հայաստանի մարզերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ իրենց տնտեսական, զբոսաշրջային, մարզական և մշակութային առանձնահատկություններով:

Աշխատանքների պատրաստման ողջ ընթացքում ուսանողներն օգտագործել են գրաֆիկական, տեսաձայնային և անիմացիոն միջոցներ՝ օգտվելով համակարգչային տեխնիկայի և համացանցի հնարավորություններից: Շնորհանդեսները կազմվել են Microsoft PowerPoint ծրագրի միջոցով:

Դասախոս Հ. Դերձյանի հավաստմամբ՝ բաց դասը նպատակ ուներ ոչ միայն զարգացնել ուսանողների «Ինֆորմատիկա» առարկայից հմտությունները, այլև նրանցում սերմանել հայրենասիրություն, հոգածություն դեպի հայրենի բնությունը:

Քոլեջի տնօրեն, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Արևիկ Լոքյանը ողջունեց այդ գեղեցիկ նախաձեռնությունը. «Սիրելի՛ ուսանողներ, անչափ ուրախ եմ, որ այս կարճ ժամանակահատվածում լավ տիրապետում եք ժամանակակից տեխնիկական միջոցներին, կարողանում եք ձեր միտքը և գիտելիքները արտահայտել նորաձև սլայդ-շոուների, տեսաձայնային պատկերների միջոցով»:

Միջոցառման վերջում ուսանողները շնորհակալություն հայտնեցին դասախոս Հ. Դերձյանին՝ իրենց արդիական գիտելիքներով զինելու և գեղեցիկ ցուցադրություն կազմակերպելու համար:

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՎՊՀ ՌՒՍԱՆՈՂՆ ԱՆՑԵԼ Է 2-րդ ՓՈՒԼ



Ռուսաց լեզվի և գրականության դասախոսների միջազգային ասոցիացիայի կողմից կազմակերպվող Ռուսաց լեզվի և ռուս բանահյուսության համաշխարհային երկրորդ փառատոնն առաջին անգամ անցկացվեց Երևանում (մայիսի 15-16-ը: Փառատոնն ընդգրկում է ռուսաց լեզվին, պատմության, գրականությանը և Ռուսաստանի մշակույթին նվիրված մի շարք միջոցառումներ: Այն նպատակ ունի աջակցել ու միավորել բոլոր նրանց, ովքեր զբաղվում են ռուսաց լեզվի, գրականության և ռուսական մշակույթի ուսումնասիրմամբ: Միջոցառման կազմակերպիչների հավաստմամբ՝ այսպիսի տոներ անցկացվել են ԱՄՆ-ում, Արգենտինայում, Սուդանում, Հարավային Կորեայում, Իտալիայում, իսկ ՎՊՀ երկրներից՝ դեռևս միայն Հայաստանում:

Այս տարի փառատոնին մասնակցեցին հանրապետության տարբեր բուհերից ներկայացուցիչներ:

Վանաձորի պետական համալսարանից փառատոնին մասնակցեցին պատմաշխարհագրական ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Հարություն Գյոզայանը և բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության տարբեր կուրսերից 11 ուսանողներ՝ Մարիամ Լուռեցյան,

Մարուսյա Ղարաբեշիշյան, Գայանե Ստեփանյան, Մարի Դալլաքյան, Գեորգի Զաղոյան, Աստղիկ Մելքոնյան, Լուսինե Խաչատրյան, Մարինե Մանուկյան, Գեղեցիկ Վերդյան, Լուսինե Բարխուդարյան և Մարինե Շահնազարյան: ՎՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի լաբորանտ Սվետլանա Բարսեղյանի և դասախոս Կարինե Գրիգորյանի ղեկավարությամբ մեր ուսանողները ակտիվ մասնակցեցին փառատոնի տարբեր անվանակարգերում՝ ռուսաց լեզվի, ռուս պատմության և մշակույթի իմացության վիկտորինայում և ռուս երգի մրցույթում ցուցադրելով իրենց բազմակողմանի գիտելիքներն ու ողջ կարողությունները:

Այս անվանակարգերում ՎՊՀ ուսանողներն արժանացել են բազմաթիվ մրցանակների, որոնց մեջ, սակայն, ամենատպավորիչը «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Լուռեցյանի՝ երգի մրցույթում արժանացած բարձր պարգևն էր: Մարիամը ժյուրիի կազմին է ներկայացել Բ. Օկուլզավայի «Աղոթք» երգով և դուրս եկել եզրափակիչ փուլ, որը տեղի կունենա նոյեմբեր ամսին Սանկտ Պետերբուրգում: Նշենք նաև, որ այս անվանակարգի եզրափակիչ փուլին մասնակցելու հնարավորություն տրվել է Հայաստանից ընդամենը 3 մասնակցի:

ՎՊՀ ուսանողները փառատոնից վերադարձել են բարձր տրամադրությամբ ու հաղթական ոգով: Մարիամի հավաստմամբ՝ ՎՊՀ պատվիրակությունը բարձր պատրաստվածության շնորհիվ մեծ տպավորություն է թողել փառատոնի մասնակիցների և ժյուրիի վրա. «Մենք իսկապես բոլոր անվանակարգերում լավ հանդես եկանք: Իսկ իմ հաղթանակը, կարծում եմ, պայմանավորված էր նաև «Աղոթք» երգի ընտրությամբ, որը բազմիցս կատարել եմ բուհում տեղի ունեցած միջոցառումների ժամանակ: Երևի Աստծուն լսելի դարձավ աղոթքս, որի շնորհիվ էլ անցա հաջորդ փուլ: Ուրախ եմ և անչափ հպարտ, որ առիթ ունեմ Սանկտ Պետերբուրգում ներկայացնելու իմ սիրելի բուհը՝ Վանաձորի պետական համալսարանը»:

Հովհան Օձնեցու նման օրը Գուգարաց թեմում համաթեմական ուխտի օր է: Այս տարի ևս այդ օրը տեղի ունեցավ ուխտագնացություն, որին միացան ՎՊՀ ուսանողական խորհրդի անդամ 40 ուսանողներ՝ ուսանողական խորհրդի նախագահի ղեկավարությամբ: Նրանք մասնակցեցին Օձնեցուի Սբ Աստվածածին եկեղեցուն մատուցված Սբ և Աննաի Պատարագին, այնուհետև՝ եկեղեցու գմբեթի խաչի օժան արարողությանը: Արարողության ավարտին Արզվի գյուղի Սբ Հովհաննես վանքում Օձնեցու դամբարանի մոտ, կատարվեց մասնավոր կարգ:

Ուխտագնացության շարունակությունը եղավ ճանաչողական փոքրիկ էքսկուրսիան: Նպատակը ուսանողներին Լուռու մարզի մի քանի պատմամշակութային արժեքներ կայացնող վայրերին ծանոթացնելն էր: Ուխտագնացությանը հաջորդող էքսկուրսիայի երթուղին հետևյալն էր՝ Հոռոմայրի Սբ Նշան եկեղեցու ստորին և վերին հուշարձանախմբեր - Քոբայր գյուղի եկեղեցիներ:



Նշենք, որ ՎՊՀ ուսանողական խորհրդի ուխտագնացությանը միանալն ամենամյա բնույթ է կրում:

Յանա ԵՂՇԱՏՅԱՆ
«Լրագրություն», 1-ին կուրս

123 շրջանավարտներ հրաժեշտ տվեցին ՎՊՀ վարժարանին



«Վերջին զանգ»․ այս բառակապակցությունը բոլորիս ստիպում է մի պահ վերապրել դպրոցական քաղցր ու անմոռանալի տարիները։ Ամեն տարի այս օրը

ծեզ կանաչ ճանապարհ, երջանիկ երիտասարդություն, բուռն ու հետաքրքիր կյանքուղի։ Ձեզ հաջողություններ մակառաջիկա քննություններում։ Ուրախ եմ, որ ձեզանից շատերը կրթությունը շարունակելու են մեր հարկի տակ՝ Վանաձորի պետական համալսարանում։ Մի՛ մոռացեք ձեր հարազատ կրթօջախն ու միշտ բարձր պահեք նրա անունը»,- ասաց վարժարանի տնօրենը։



սովորաբար մի քիչ ուրիշ է լի այլ զգացողություններով, ապրումներով, հուշերով ու տրամադրությամբ։ Այն բնականորեն հուզում է բոլորին․ հիշողություն դարձած դպրոց, դասարան, համադասարանցիներ, սիրված ուսուցիչներ, առաջին սեր, հարազատ միջավայր և, ամենակարևորը՝ անհոգ մանկություն ու պատանեկություն։

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ՎՊՀ հենակետային վարժարանը տոնական բարձր տրամադրությամբ ու մեծ շուքով նշեց վերջին զանգը՝ հրաժեշտ տալով հունանիտար և բնագիտական հոսքերում սովորող 123 շրջանավարտների («Չայոց լեզու և անգլերեն» հոսք, դասղեկ՝ Ալլա Սարգսյան, «Չայոց լեզու և պատմություն» հոսք, դասղեկ՝ Արամ Գրիգորյան, «Ռուսաց լեզու» հոսք, դասղեկ՝ Յերմինե Ավետիսյան, «Ֆիզմաթ» հոսք, դասղեկ՝ Արմեն Քառյան, «Կենսաբանություն և քիմիա» հոսք, դասղեկ՝ Թամարա Մատինյան)։



Ուսումնառության այս տարիների ընթացքում վարժարանի սաները շրջապատված են եղել մանկավարժների ջերմությանը, ովքեր նրանց սովորեցրել են լինել ազնիվ, բանիմաց, երկրին ու հայրենիքին նվիրված քաղաքացիներ։ Յենակետային վարժարանը աշակերտների համար եղել է կրթման, դաստիարակման և արժեքների ձևավորման յուրատեսակ դարբնոց։

Հնչեցին շնորհավորանքի խոսքեր, ուրախությունն ու թախիծը միաձուլվել էին իրար։



Պատասխանատու այս օրն անչափ հուզված էր նաև վարժարանի տնօրեն Սամվել Աղաջանյանը։ «Սիրելի ուսուցիչներ, իմ՝ արդեն իսկ ավարտած սաներ, շնորհավորում եմ բոլորիդ այս հիշարժան օրվա առիթով, մաղթում

առթիվ, այս մեծ կյանքի ճանապարհին մաղթում նպատակների իրականացում և նորանոր հաջողություններ։



Մարզական

ՎՊՅ ՌԻՍԱՆՈՂԸ ԴԱՐՁԱՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Վանաձորի պետական համալսարանի կենսաբանաքիմիական ֆակուլտետի «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող, Հայաստանի հավաքականի ներկայացուցիչ, Վանաձորի օլիմպիական հերթափոխի մարզադպրոցի, «Գագիկ Ղազարյան» մարզակումբի անդամ, ներկայացուցչական բազմաթիվ մրցումների հաղթող և մրցանակակիր Տիգրան Կիրակոսյանը նվաճեց սամբոյի Եվրոպայի մեծահասակների չեմպիոնի կոչումը:

Մեր մարզիկը 38 երկրների ուժեղագույն սամբիստների մրցապայքարում 52 կգ քաշային կարգում հաջողաբար պարտության մատնեց բուլղարացի և ռուս մրցակիցներին և դուրս եկավ եզրափակիչ: Ոսկե մեդալի համար պայքարում Տիգրանի հակառակորդը ադրբեջանցի Ագասիֆ Սամադովն էր: Տիգրանը 8:0 հաշվով հաղթեց ադրբեջանցի մարզիկին և իռչակվեց Եվրոպայի չեմպիոն:

Սա նաև մեծ հաղթանակ է Վանաձոր քաղաքի սպորտային տարեգրության մեջ: Հիշեցնենք, որ վերջին անգամ սամբո մարզաձևից 1995 թ. վանաձորցի մարզիկ Ղուկաս Մանուկյանն էր արժանացել այդ կոչմանը:



ՎՊՅ պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ովքեր ուսանողությունն այս հաջողության առթիվ շնորհավորում են Տիգրան Կիրակոսյանին, ՀՀ վաստակավոր մարզիչ Աղասի Գալստյանին և բոլոր մարզասերներին:

ՄԵՐ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՐՁԱՎԱՆ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում մայիսի 15-ին մեկնարկեց «Միասնական պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ» խորագրով միջբուհական մարզամշակութային ունիվերսիադան, որը կազմակերպվել էր ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ:

Ունիվերսիադան ուներ երեք ուղղվածություն՝ սպորտային (ֆուտբոլ, բասկետբոլ, հրաձգություն, սեղանի թենիս, շախմատ), մշակութային (երգ, պար, սոցիալական տեսա-հոլովակ) և ինտելեկտուալ (ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ): Մրցույթին մասնակցում էր 11 բուհ, որոնց թվում նաև Վանաձորի պետական համալսարանը: Մեր բուհի ուսանողները հանդես եկան սեղանի թենիս և մինի ֆուտբոլ մրցաձևերում: ՎՊՅ 3 ուսանողներից կազմված սեղանի թենիսի թիմը (Էրիկ Կոստանյան, Էդուարդ Հակոբյան, Գոռ Ավոյան), դուրս գալով եզրափակիչ փուլ, հաղթեց Սլավոնական համալսարանի թիմին և զբաղեցրեց պատվավոր առաջին տեղը:

4 հաղթանակներից և մեկ պարտությունից հետո ՎՊՅ

մինի ֆուտբոլի թիմը գրավեց 3-րդ տեղը (մարզիչ՝ Զավեն Եվոյան): Թիմի կազմում էին ուսանողներ Թորոս Թորոսյանը, Հրանտ Կազազյանը, Հայկ Վարդումյանը, Անդրանիկ Յովսեփյանը, Նարեկ Եսայանը, Գուրգեն Շահբազյանը, Մարտուն Սարգսյանը, Արմեն Գրիգորյանը, Սինդր Պողոսյանը, Կառլեն Լոռյանը, Գոռ Ղարաբոյանը և Տիգրան Զաքարյանը:

Այս ամիս մարզական հաղթանակներ են գրանցել նաև ՎՊՅ հրաձիգները: Արցախյան հերոսամարտի հերոսների հիշատակին նվիրված ԵԿՄ Լոռու մարզխորհրդի և Վանաձորի ՊՄՏՀԿ խորհրդի փոխանցիկ մրցանակի խաղարկման գնդակային հրաձգության մրցումներին Վանաձորի պետական համալսարանի հավաքական թիմը 15 թիմերի մրցապայքարում գրավել է պատվավոր երկրորդ հորիզոնականը: ՎՊՅ թիմի ներկայացուցիչներն էին Արտակ Մկրտչյանը, Համլետ Հակոբյանը և Գոռ Մանուկյանը:

ՄԵԼԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎՊՅ վարժարան, ռուսական հոսք, 12-րդ դասարան

Սիրո անհունը

Սև աչքե՞րդ էին՝ հոգիս գերեցին,
Մութ հայա՛ցքդ էր,
Թե՞ խոսքե՛րդ տաք,
Որ ինձ տանում են սիրո անհուններ՝
Ժպիտով քո խոր,
Հայացքով հստակ ...
Անորոշությունն ահավոր էր շատ.
Անհետացումդ,
Վերադարձդ նոր...
Քեզանով ապրում, շնչում քեզանով,
Եվ քո բառերն են կրկնում ամեն օր...
Հիմա չկաս դու,
Ու ես չգիտեմ
Ո՞ր փնտրել քեզ, ո՞ր...
Լուռ է իմ շուրջը,
Եվ դու ես միայն
Ծավալվել-լցվել ամեն-ամենուր...

«Ապագա մանկավարժ»
երկաթաբաթերթ
Վկայական՝ 727
2001, ՀՀ, Վանաձոր,
Տիգրան Մեծի 36
Էլ. փոստ՝ mankavarzh@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՄԻ
Հրատարակիչ՝
«Ապագա մանկավարժ»
երկաթաբաթերթի խմբագրություն
Տպաքանակը՝ 100
Տպագրվել է ՎՊՄԻ-ի տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ
Պատասխանատու՝ Անի ԽԱԶՍԻՐՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՏՅԱՆԻ
Լուսանկարները՝ խմբագրության